

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԲՐՅՈՒՄԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ  
ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ԱՌԱՆՅ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՅ ՆԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ /ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ/  
ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱ-  
ՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 սեպտեմբերի 2013թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Նարոյթունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի  
(զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,  
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկա-  
յացուցիչ՝ Նայասարանի Նանրապետության փարածքային կառավարման նախարա-  
րության միգրացիոն պետական ծառայության պետ Գ. Եզանյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական  
դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ  
հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի  
ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության եւ  
Եվրոպական միության միջեւ առանց թույլտվության բնակվող անձանց  
հեղինակունման /ռեադմիսիայի/ մասին համաձայնագրում ամրագրված պարտա-

վորությունների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 25.06.2013թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

**1.** Նայասարանի Նանրապետության եւ Եվրոպական միության միջեւ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման /ռեադմիսիայի/ մասին համաձայնագիրը /այսուհետ՝ Նամաձայնագիր/ ստորագրվել է Բրյուսելում 2013թ. ապրիլի 19-ին՝ ՆՏ արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանի կողմից:

Նամաձայնագրի նախաբանում հստակ արձանագրված է, որ Պայմանավորվող կողմերի հիմնական նպատակն է ամրապնդել իրենց համագործակցությունն անօրինական միգրացիայի դեմ առավել արդյունավետ պայքար ծավալելու համար:

Նամաձայնագրի միջոցով Պայմանավորվող կողմերը նախապեսում են փոխադարձության հիման վրա ստեղծել արագ եւ արդյունավետ իրավական ընթացակարգեր /կառուցակարգեր/ այն անձանց հայրնաբերման եւ անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում կամ այլեւս չեն բավարարում Նայասարանի կամ Եվրոպական միության անդամ պետություններից մեկի փարածք մուտք գործելու, այնպեղ գտնվելու կամ բնակվելու համար պահանջներին, եւ դյուրացնելու այդպիսի անձանց փարանցումը՝ համագործակցության ոգով:

Իբրեւ հիմնարար եւ առանցքային սկզբունք՝ Նամաձայնագիրը որոշակի սահմանում է, որ դրա գործողության ընթացքում անհրաժեշտ է ապահովել մարդու իրավունքների եւ պարավորությունների ու պարականությունների նկատմամբ հարգանքը, իրականացնել հետընդունված անձանց իրավունքների պաշտպանությունը, որոնք բխում են նրանց վերաբերյալ կիրառելի միջազգային փաստաթղթերից, մասնավորապես, 1948թ. դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, 1950թ. նոյեմբերի 4-ի՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայից եւ այլն:

2. Քննության առարկա Նամաձայնագիրը բաղկացած է նախաբանից, 24 հոդվածներից եւ դրա անբաժանելի մասը հանդիսացող 6 հավելվածներից:

Նամաձայնագրի 1-ին հոդվածում փրված են դրա փեքստում օգտագործվող հասկացությունների /եզրույթների/ սահմանումները եւ դրանց իրավակիրառ նշանակությունը:

Նամաձայնագրի՝ «Տիմնարար սկզբունքները» վերաբառությամբ 2-րդ հոդվածում առանձնակի շեշտված է, որ անկանոն միգրացիայի դեմ համագործակցելիս հարցում ներկայացրած պետությունը պետք է նախապատվություն փա կամավոր, այլ ոչ թե պարտադրված վերադարձին, եթե պարճառներ չկան հավաքալու, որ այն կխոչընդոտի անձի վերադարձին հարցում սրացած պետություն:

Նամաձայնագրի 1-ին եւ 2-րդ բաժիններն ամրագրում են հեփընդունման մասով Նայաստանի Նանրապետության /այսուհետ՝ Նայաստան/ եւ Եվրոպական միության /այսուհետ՝ Միություն/ պարտավորությունները, իսկ 3-րդ բաժինը նվիրված է հեփընդունման իրավական ընթացակարգերին: Նախաբեսված են այն անճանց շրջանակները, որոնք ենթակա են սահմանված կարգով հեփընդունման, ինչպես նաեւ հեփընդունման պարգորոշ պայմանները եւ համապարասխան կառուցակարգերը:

Սահմանված է, որ հեփընդունվող անձի ցանկացած փոխանցման համար պահանջվում է հեփընդունման դիմումի ներկայացում՝ հարցում սրացած պետության իրավասու մարմնին:

Նամաձայնագրի 8-րդ հոդվածում շարադրված են հեփընդունման դիմումին ներկայացվող հիմնական պահանջները, իսկ հեփընդունման դիմումի համար կիրառելի ընդհանուր ձեւը ներկայացված է Նամաձայնագրի 5-րդ հավելվածում:

Նեփընդունման դիմումը կարող է ներկայացվել կապի ցանկացած միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային միջոցներով:

Քաղաքացիության մասով ապացուցման միջոցները թվարկված են Նամաձայնագրի 9-րդ հոդվածում եւ համապարասխանաբար՝ դրա 1-ին եւ 2-րդ հավելվածներում, իսկ երրորդ երկրի քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անճանց մասով ապացուցման միջոցները՝ Նամաձայնագրի 3-րդ եւ 4-րդ հավելվածներում /հոդված 10/:

Նամաձայնագրին համապարասխան՝ հեփընդունման ենթակա անձինք կարող են փեղափոխվել ցանկացած միջոցով, այդ թվում՝ նաեւ օդային ուղիներով: Միալմամբ իրականացված հեփընդունման իրավական հեփեւանքները նախաբեսված են Նամաձայնագրի 13-րդ հոդվածում:

Նամաձայնագրում /հոդված 17/ հարկապես մաքրանշված են անձանց անձնական փոխանցման պաշտպանության հանգամանքը եւ այդ կապակցությամբ Կողմերի որոշակի պարտավորությունները:

Նամաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Նամաձայնագիրը վավերացվում կամ հաստատվում է Պայմանավորվող կողմերի կողմից՝ իրենց համապատասխան ընթացակարգերի համաձայն:

Նամաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկրորդ ամսվա առաջին օրը՝ այն ամսաթվից հետո, երբ վերջին Պայմանավորվող կողմը ծանուցել է մյուս Կողմին, որ վերը նշված ընթացակարգերը կատարվել են /հոդված 23/:

**3.** Նամաձայնագրով Նայաստանն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- փալիս է նախապատվություն կամավոր, այլ ոչ պարտադրված վերադարձին,
- հետ է ընդունում սեփական քաղաքացիներին՝ անդամ պետության դիմումի հիման վրա՝ ըստ Նամաձայնագրի 3-րդ հոդվածի պահանջների,
- հետ է ընդունում նաեւ նույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց անչափահաս չամուսնացած երեխաներին, ինչպես նաեւ ամուսիններին,
- հետ է ընդունում այն անձանց, ովքեր հրաժարվել են Նայաստանի քաղաքացիությունից՝ անդամ պետության փարածք մուտք գործելուց հետո,
- փրամադրում է հետընդունվող անձի վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթ /3 աշխատանքային օրվա ընթացքում/,
- հետ է ընդունում երրորդ երկրի քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց՝ Նամաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան,
- ապահովում է իր փարածք հետընդունված անձանց իրավունքների պաշտպանությունը՝ համաձայն նրանց նկատմամբ կիրառելի միջազգային փաստաթղթերի,
- սահմանված կարգով ներկայացնում է հետընդունման դիմում՝ հարցում սրացած պետության իրավասու մարմնին,
- պահպանում է հետընդունման դիմումի համար կիրառելի ընդհանուր ձեւը՝ ըստ Նամաձայնագրի 5-րդ հավելվածի,
- գրավոր ծանուցում է հարցում սրացած պետության իրավասու մարմիններին՝ փոխադրման ժամկետների, մուտքի անցակետի եւ այլ փոփոխությունների մասին,

- եթե հանդես է գալիս որպես հարցում ներկայացրած պետություն, ապա պարտավորվում է հոգալ հեպրնդունվող անձի կամ երրորդ կողմի հեպրնդունման հետ կապված փրանսպորտային բոլոր ծախսերը,

- կրում է լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ՝ համապետ կոմիսիե ստեղծելու, ինչպես նաև կոմիսիեի գործունեությանը մասնակցելու կապակցությամբ /հոդված 19/,

- ապահովում է նշված կոմիսիեի կողմից ընդունված որոշումների կատարումը,

- իրականացնում է անձնական փվյալների սահմանված կարգով պաշտպանությունը,

- նշանակում է իրավասու մարմիններ՝ Նամաձայնագրի 20-րդ հոդվածին համապատասխան:

4. ՆՏ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Նամաձայնագիրը կոչված է ամրապնդելու Նայաստանի եւ Միության համագործակցությունն անձանց անօրինական միգրացիայի դեմ՝ սահմանելով փոխադարձության հիման վրա արագ եւ արդյունավետ հեպրնդունման ընթացակարգեր ու դյուրացնելով անձանց սահմանված կարգով փարանցումը: Անկանոն միգրացիայի կանխարգելման եւ դրա դեմ պայքարի ընթացքում Կողմերը պարտավորվում են ապահովել մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները եւ նորմերը:

Սույն Նամաձայնագրի դրույթները համահունչ են ՆՏ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին, միաված են միգրացիոն քաղաքականության ոլորտում Նայաստանի եւ Միության կապերի ընդլայնմանը եւ խորացմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2013 թվականի ապրիլի 19-ին Բոյոսելում ստորագրված՝ Նայաստանի Նանրապետության եւ Եվրոպական միության միջեւ առանց թույլտվության բնակվող

անձանց հետընդունման /ռեադմիսիայի/ մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապարասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

10 սեպտեմբերի 2013 թվականի  
ՍԴՈ-1113